

Մտաւորական Սպասարկութեանց Գրասենեակը իր այս վեցերորդ հրատարակութեամբ հայ ընթերցողներուն կը ներկայացնէ նոր շարքի մը առաջին հատորը, որ կը յուսանք թէ հետաքրքրութիւն պիտի ստեղծէ:

Ան պատմական նշխար մըն է, զոր գիրքի առած է հայ արեւպիսկոպոս մը Ժէ. դարու վերջին քառորդին, նկարագրելու համար իր ուղեւորութիւնը դէպի անծանօթ աշխարհ մը՝ Հապէսիս: Այս հրատարակութեամբ հանրութեան սեփականութիւն կը դարձնենք զայն:

Ասիկա կը պարտինք Եթովպիոյ Տիրէսպա Բաղափի ագգայիններէն Կ.Պոլսեցի (Սամաթիա) Տիար Հրան Մինասեանի: Իր կողակցին՝ Տիկին Հրաչունի Հ. Մինասեանի անմոռաց յիշատակին կը ձօնենք այս գործը՝ իբր յետ-մահու յուշարձան:

Արդեօք ասոր նման ի՞նչ ձեռագիրներ կան հետաքրքրական, որոնք մնացած են անյայտութեան մէջ եւ կ'սպասեն զուրգուրտ ձեռներու՝ լոյս աշխարհ զայլու համար:

Ուրախ ենք, որ մենք առիթ ունեցանք անյայտութենէ փրկելու զոնք անոնցմէ մէկը եւ աւելի ուրախ պիտի ըլլանք, եթէ մեզի տրամադրութիւն նման երկեր, զանոնք հրատարակելու եւ կորուստ փրկելու համար:

ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԵԱՆՑ

ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ